Հուշագիր հեղինակներին

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կողմից հրատարակվող ամենամյա գիտական հոդվածների ժողովածուն՝ երկու պրակներով (Ա՝հումանիտար և հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ, Բ՝մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտություններ, տնտեսագիտություն և աշխարհագրություն), ընդունելի է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալության ընդունելի հրատարակությունների ցուցակում:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կողմից հրատարակվող գիտական հոդվածների ժողովածուն հրատարակվելու ընդունվում են այն հոդվածները, որոնք համապատասխանում են պարբերականի խմբագրության կողմից ներկայացվող պահանջներին:

1. Կտպագրվեն այն հոդվածները, որոնք արտաքին գրախոսողների կողմից կարժանանան դրական կարծիքի:

2. Հոդվածները հարկավոր է ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

3. Հարկավոր է հոդվածներին կցել հոդվածին համապատասխան հակիրճ շարադրանքը (аннотация, abstract) և բանալի բառեր (ключевые слова, key words) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

4. Հոդվածի երկու տպագիր օրինակների հետ համատեղ հարկավոր է ներկայացնել էլեկտրոնային տարբերակը word միջավայրում (word 2003-2010) (CD կրիչներով), թուղթը՝–

A4 ձևաչափի, տառատեսակը (Fonts)՝ Times New Roman, Sylfaen, միջտողային հեռավորությունը՝1 (одинарный); հավասարեցումը՝ըստ լայնքի (եթե այլ պահանջ ներկայացված չէ), լուսանցքի չափերը՝վերևից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից 5 սմ:

5. Հոդվածը հարկավոր է շարադրել հետևյալ հերթականությամբ

• բնագավառը

• ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման կոդը) (УДК)

• հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը (14pt, հոծ (полужирный), հավասարեցումը՝ կենտրոնացված (по центру)), հոդվածի հակիրճ բովանդակությունը 5-7 տող և բանալի բառերը (10pt)

(հոդվածի լեզվով)

• հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը (12pt, հոծ, հավասարեցումը՝ կենտրոնացված), հոդվածի հակիրճ բովանդակությունը 5-7 տող և բանալի բառերը (10pt) (մյուս երկու լեզուներով)

• նախաբան՝ աշխատանքի նպատակի շարադրմամբ և արդիականության հիմնավորմամբ (1 էջը չգերազանցող) (12pt)

• հոդվածի հիմնական բովանդակությունը (12pt)• եզրահանգում (0,5 էջը չգերազանցող), որում հարկավոր է նշել արդյունքների

հնարավոր պրակտիկ կիրառումը (12pt)

• գրականության ցանկ (10pt), որի տարրերը պետք է պարունակեն հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան ու հայրանվան սկզբնատառերը, աշխատանքի լրիվ անվանումը: Գրքերի համար հարկավոր է նշել հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը և էջերի քանակը: Հոդվածների համար՝ ամսագրի կամ ժողովածուի անվանումը, հրատարակման տարեթիվը, հատորը, համարը և էջերը:

6. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է իրականացնել Math Type կամ MS Equation բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի: Հավասարեցումը՝ կենտրոնացված (по центру), համարակալումը՝ աջից:

7. Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել:

8. Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:

9. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:

10. Գրաֆիկական նյութը միայն սև-սպիտակ երանգավորմամբ պետք է լինի հստակ և չպահանջի լրացուցիչ խմբագրում: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս): Գրաֆիկները ևս պետք է վերնագրվեն և համարակալվեն:

11. Հոդվածի վերջին էջում (մի օրինակի վրա) պետք է առկա լինեն բոլոր համահեղինակների

ստորագրությունները:

12. Հրատարակման մերժման դեպքում խմբագրական խորհուրդն իրավունք է վերապահում

չվերադարձնել հեղինակին հոդվածի մի տպագիր օրինակը:

13. Մի քանի հեղինակների առկայության դեպքում խորհուրդ է տրվում հեղինակների

ազգանունները դասավորել ըստ այբբենական կարգի:

14. Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն:

15. Առանձին հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակի (հեղինակների)

մասին (փաստաթուղթը վերնագրել “сведения об авторе”, տեղեկությունները ներկայացնել

հոդվածի լեզվով). Այստեղ հարկավոր է նշել՝ ԱԱՀ (լիովին), աշխատավայրը, պաշտոնը,

կոչումը, գիտական աստիճանը, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail)

Հումանիտար և հասարակական գիտությունների ու դասավանդման մեթոդիկաների ոլորտների հոդվածների ներկայացման վերջնաժամկետը **հոկտեմբերի երեսունն է**: Մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտությունների, տնտեսագիտության և աշխարհագրության ոլորտների հոդվածների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

Գիտական հոդվածները խնդրում ենք ներկայացնել ԳԿՄԿ-ի դեկանին:

Հեռախոս՝ **/060/ 62-35-20 /303/,** էլեկտրոնային հասցե՝ nhakobyan@mail.ru